ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

#30

ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017

ՀՈԿՏԵՄԲԵՐ

Նորություններ

Հետազոտություններ

Միջոցառումներ

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

http://ngngo.net/ NEW GENERATION HUMANITARIAN NGO ngngo.ARMENIA ngngo.armenia

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱՆՍ* ԽՈՀԱՆՈՑԸ

2017թ.-ի հոկտեմբերի 7-ին տեղի ունեցավ երկրորդ Տրանս* խոհանոցը:
Այս անգամ այցելեցինք Լիկայի բնակարան և միասին պատրաստած աղցանն անվանեցինք «Լիկա» հյուրընկալ տանտիրուհու պատվին:
Հանդիպումը անցավ շատ հետաքրքիր և արդյունավետ:
Հանդիպման ընթացքում քննարկեցինք այն միջոցառումների ցանկը, որոնց խոհանոցի մասնակիցները կցանկանային ակտիվ մասնակցություն ցուցաբերել:
Տրանս խոհանոցի նպատակն է այցելել Տրանս* անձանց բնակարաններ, միասին պատրաստել աղցաններ և զրուցել ներկայիս կարիքների և խնդիրների մասին:

LIFE2 ԱՐՏԱԳՆԱ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ ՏՍՏ ԵՒ ՏՐԱՆՍ* ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ահա և ավարտվեց LIFE2 արտագնա տեղեկատվական հարթակը: Այս անգամ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն «Առողջության Իրավունք» ծրագրի շրջանակներում սկսնակ ՏՍՏ և Տրանս* ակտիվիստների համար նախատեսել էր աննախադեպ ձևաչափով հանդիպում:

Տեղեկատվական հարթակի նպատակն էր ՏՍՏ և Տրանս* համայնքի ներկայացուցիչների շրջանում բարձրացնել առողջության իրավունքի վերաբերյալ գիտելիքները, նպաստել իրավագիտակցության բարձրացմանը, ծանոթացնել իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային մեխանիզմներին, ինչպես նաև նպաստել համայնքների ներգրավվածությանը ՄԻԱՎ-ին հակազդման ազգային մարմիններում:

LIFE2-ի առաջին օրը մասնակիցներին ներկայացվեց «Մարդու իրավունքներ» և «Առողջության իրավունք» թեմաները, որի ընթացքում դասընթացի փորձագետ ՆՍՀԿ իրավաբան Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց մարդու իրավունքների հասկացությունը, մարդու իրավունքների սերունդները և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերը: Խոսվեց նաև մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի, դատարանի և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների մասին:
«Առողջության իրավունք» թեմայի շրջանակներում մասնակիցներին ներկայացվեց պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը, ինչպես նաև ՀՀ-ում բժշկական հիմնարկներում բժշկական անձնակազմի ցածր

իրավագիտակցության և բժշկական գիտելիքների ցածր մակարդակի, բժշկական անձնակազմի կողմից դրսևորվող խտրական վերաբերմունքի և խտրականության հաղթահարման մեխանիզմների վերաբերյալ: Հանդիպման ողջ ընթացքն ուղեկցվում էր տեսահոլովակների դիտմամբ և գործնական աշխատանքներով:
Առաջին օրվա բաղադրիչներից մեկն էր նաև պլենար նիստը, որը վարում էր Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության ղեկավարության պետական դեպարտամենտի արտաքին ծառայության աշխատակից Սոմեր Բեսսիր-Բրայերսը:

LIFE2 երկրորդ օրը սկսվեց ՆՍՀԿ նախագահ, «Առողջության իրավունք» ծրագրի ղեկավար Սերգեյ Գաբրիելյանի կողմից «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումն ու թեստավորման կարևորությունը» թեմայի ներկայացմամբ, որի ընթացքում մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին, այնուհետև իրավաբան Անահիտ Մկրտչյանը ներկայացրեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին և ՄԻԱՎ-ով ապրող անձանց իրավունքների մասին:

Երկրորդ օրը նույնպես նախատեսված էր պլենար նիստ, որին մասնակցում էին ՀՀ Առողջապահության նախարարության ներկայացուցիչ Նաիրա Սերգեևան, «Առաքելություն Արևելք» Մարդասիրական Օգնություն Կազմակերպության աշխատակից Սոնա Օրբելյանը և ՄՀՀ-ի ներկայացուցիչ Արմեն Աղաջանովը: Պլենար Նիստի փորձագետներին մասնակիցները հղեցին իրենց հուզող բոլոր հարցերը, որոնց ստացան սպառիչ պատասխաններ:

ՄԻ ՔԱՄԻՆ ԱՈՒԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 13-ին <<Նոր Սերունդ>> ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ ամենահուզումնառատ միջոցառումներից մեկը, որն անվանել էինք <<Մի Քամին Աութի Պատմություն>>: Երեկոյի ընթացքում մասնակիցները կիսվեցին իրենց քամին աութի պատմություններով, որի համար մենք անչափ շնորհակալ ենք նրանց, քանի որ գիտակցում ենք, թե որքան բարդ էր դա մասնակիցների համար՝ վերապրել նույն ապրումներն ու պատմել դրանց մասին, առանց էմոցիոնալ պոռթկումների:
Ներկա էին նաև մարդիկ, ովքեր նոր-նոր են պատրաստվում բացահայտել իրենց ինքնությունն աշխարհին:
Մոտ ապագայում <<Նոր Սերունդ>> ՀԿ-ի ջանքերով կստեղծվի համանուն գիրք, որտեղ տեղ կգտնեն ամենահետաքրքիր ու հիշարժան քամին աութի պատմությունները, որոնք վերցված են հենց հայ գունավոր իրականությունից:
<<Մի Քամին Աութի Պատմություն>> միջոցառման նպատակն էր հատկացնել ժամանակ և տարածք բոլոր այն համարձակներին, ովքեր անցել են քամին աութ կոչվող կյանքի դժվարին փուլով, ինչպես նաև հավաքագրել այդ պատմությունները <<Մի Քամին Աութի Պատմություն>> գրքի ներքո:
Եվս մեկ անգամ շնորհակալություն ենք հայտնում բոլոր մասնակիցներին ներկա գտնվելու և սեփական պատմություններով կիսվելու համար:

«ԳՈՒՅՆԶԳՈՒՅՆ ԽՈՀԱՆՈՑ»-Ի ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

2017 թվականի հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ «Գույնզգույն խոհանոց»-ի երկրորդ հանդիպումը, որը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի SUS և Տրանս* համայնքների մոբիլիզացնողների կողմից:

«Գույնզգույն խոհանոց»-ի նպատակն էր երիտասարդներին միավորել մեկ վայրում, որպեսզի նրանք ծանոթանան միմյանց հետ, կիսվեն համեղ ուտելիքներ պատրաստելու իրենց յուրահատուկ բաղադրատոմսերով, զրուցեն առօրյայի և ամենատարբեր հարցերի մասին:

Հայտարարությունը բաց էր. յուրաքանչյուրը կարող էր գրանցվել և մասնակցել:

Երիտասարդները պատրաստեցին յուրահատուկ ուտեստներ և աղցաններ: Կարելի էր նկատել, որ նրանք թիմային մոտեցում էին ցուցաբերում՝ աշխատելով օգնել իրար, ինչը շատ ոգևորող էր: Հետաքրքիր էր նաև այն, որ ոմանք եկել էին սովորելու, թե ինչպես ուտեստ պատրաստել: Մասնակիցներից Էմիլ Ավետիսյանը, որը նաև հանդիպանում է «Առողջության իրավունք» ծրագրի SUS համայնքի մոբիլիզացնող, պատրաստեց լազանյա կիսվելով մասնակիցների հետ բաղադրատոմսով:

Պատրաստելուց հետո բոլորը նստեցին մեկ սեղանի շուրջ և իրենց պատրաստած ուտեստներն ու դեսերտները վայելելուն զուգահեռ սկսեցին նոր գաղափարներ ներկայացնել:

ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ևս միացավ մասնակիցների կողմից պատրաստված ուտեսների սեղանին: Լսելով նոր գաղափարները՝ Ս.Գաբրիելյանը նշեց, որ երիտասարդները ազատ են հանդես գալու նոր նախաձեռնություններ իրականացնելու գաղափարներով՝ օգտագործելով գրասենյակի ռեսուրս կենտրոնի տարածքը կամ ֆինանսական աջակցությունը:

ՆՍՀԿ գրասենյակի օգնական Լևոն Չիլինգարյանը նախաձեռնության ավարտին վկայականներ հանձնեց մասնակիցներին տարբեր անվանակարգերում:

Մասնակցության հայտերը բավականին շատ են եղել, այդ իսկ պատճառով կազմակերպիչները որոշեցին պարբերաբար կազմակերպել «Գույնզգույն խոհանոց»՝ այն համալրելով նոր բաղադրատոմսերով, մասնակիցներով և գաղափարներով:

ՏԱՔ ԳԻՆԻ, ՏԱՔ ԶՐՈՒՅՑՆԵՐ

2017թ, հոկտեմբերի 27-ին «Նոր Սերունդ» ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Տաք գինի Տաք զրույցներ» միջոցառումը: Միջոցառման նպատակն էր ստեղծել միջհամայնքային հանդուրժողական և ջերմ մթնոլորտ, ինչպես նաև տրամադրել իրավաբանական խորհրդատվություն բոլոր ցանկացողներին, կատարել առողջապահության ոլորտում իրավախախտումների վերաբերյալ դեպքերի արձանագրում և ակտիվիստության քարտեզագրում:

Հանդիպումն անցավ սպասվածի պես՝ մասնակիցները մեծ ոգևորությամբ պատրաստեցին տաք գինին, որից հետո բռնվեցին ծագած միջահամայնքային խնդիրների ու կարիքների գնահատմանը: Քննարկեցինք առաջիկա միջոցառումների ցանկը և լսեցինք նոր առաջարկներ:

Գնահատելով ռիսկերը միջոցառումը նախատեսված էր միայն չափահաս անձանց համար ուստի առաջիկայում պլանավորում ենք բազմաթիվ այլ միջոցառումներ, որտեղ ներգրավված կլինեն ավելի լայնամասշտաբ տարիքային խմբերի ներկայացուցիչներ:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում բոլորին մասնակցության համար:

Investing in our future
The Global Fund
To Fight AIDS, Tuberculosis and Malaria

ECOM

RIGHT TO HEALTH

«Առողջության Իրավունք» ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից և ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի (ECOM) միջոցով, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՄԻԱՎ-Ի և ՁԻԱՀ-Ի ԻՐԱՎԻՃԱԿԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏՍՏ-ՆԵՐԻ (տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդ)ԵՎ ՏՐԱՆՍ* ԱՆՁԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ:

ՄԻԱՎ-ի վերաբերյալ լնդային տրանսուդատի հետազոտության իրականացումը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում. 2017 թվականի օգոստոսից մինչև հոկտեմբերի 30-ը հետազոտվել է **210** շահառու, որի ընթացքում արձանագրվել է ՄԻԱՎ վարակի **5** դեպք:



Investing in our future
The Global Fund
To Fight AIDS, Tuberculosis and Malaria

Mission East

Ծրագիրն իրականացվում է «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կողմից և ֆինանսավորվում է «Առաքելություն Արևելք» ՄՕԿ հայաստանյան մասնաճյուղի կողմից, ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ Հիմնադրամի ֆոնդերից:

ՄԻԱՎ-ԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԿԱԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

2017թ-ի հոկտեմերի 12-13-ը Էստոնիայի Թալլինն քաղաքում տեղի ունեցավ ՏՍՏ-ների շրջանում ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների կասկադի վերաբերյալ աշխատանքային հանդիպումը:

«Առողջության իրավունք» ծրագիրն իրականացնող հինգ երկրների, այդ թվում՝ զ Հայաստանի ներկայացուցիչները, քննարկեցին ծառայությունների կասկադի օգտագործման, վերլուծության և շահերի պաշտպանության գործընթացում արդյունքների կիրառման հարցերը:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2017թ.-ի հոկտեմբերի 10-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը գրանցեց իր հերթական հաջողությունը արդարադատության ոլորտում: ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից՝ նախագահությամբ դատավոր Ա. Ազարյանի, մասնակիորեն բավարարվեց Ա. Ա. Գործով բերված վերքննիչ բողոքը՝ Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2017թ.-ի հոկտեմբերի 7-ի որոշման դեմ (գործի ՆՍՀԿ փաստաբան Հայկ Հայրապետյան):
«Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության վստահորդներ՝ Մեղադրյալներ Ս.Պ.-ի Ա.Ս-ի և Ա.Ա.-ի նկատմամբ կիրառված կալանքը որպես խափանման միջոց որոշումների դեմ բերվեցին վերաքննիչ բողոքներ որոնցից 26 հոկտեմբեր 2017թ.-ին մասնակիորեն բավարարվեց միայն Ա.Ա-ի գործով ներակայացված բողոքը և դատարանը փոխեց խափանման միջոցը և փոխարինեց այն կալանքի այլընտրանքային խափանման միջոցով՝ գրավով:
Գրավի գումարը վճարելուց հետո Ա. Ա. անհապաղ կազատվի կալանքից:

Գործի հակիրճ նկարագրություն՝

2017թ.-ի սեպտեմբերի 12-ին ժամը 00:00-ին, գործով մեղադրյալներ Տ.Ք.-ն, Ս.Պ.-ն, Ա.Ս.-ն և Ա.Ա.-ն գտնվում էին ՀՀ ք. Երևանի Իտալիա փողոցում «Բեստ Վեստերն Կոնգրես» հյուրանոցի մոտակայքում՝ հագնված կանացի հագուստով, երբ իրենց էր մոտեցել «BMW» մակնիշի ավտոմեքենա, որի ղեկին նստած էր Ա.Ձ.-ն (հետագայում կճանաչվի գործով տուժող): Ավտոմեքենայի հետևի նստատեղում նստած էին եղել երկու կին, որոնցից մեկը սկսել է նկարահանել հագուստափոխներին: Մեղադրյալները հորդորել են իրենց չնկարել, սակայն նրանք անպարկեշտ գործողությունները դադարեցնելու փոխարեն հնչեցրել են հայհոյանքներ: Այնուհետև, Տուժողը դուրս է եկել ավտոմեքենայից և հարձակվել մեղադրյալ Ս.Պ.-ի վրա, սկսել հարվածներ հասցնել նրան: Հարվածների արդյունքում մեղարդյալ Ս.Պ.-ն ընկել է գետնին: Այնուհետև տուժողը հարձակվել է մյուս մեղադրյալ Ա.Ս.-ի վրա և հարվածներ հասցնելուց հետո բռնել նրա մազերից և քաշելով հանել նրա կեղծամը:

Մեղադրյալները ինքնապաշպանության նպատակով փորձել են սթափեցնել տուժողին: Այնուհետև մոտեցել է ոստիկանությունը և միջադեպի մասնակիցները ոստիկանների ուղեկցությամբ գնացել են քննչական բաժանմունք, որտեղ տվել են բացատրություն կատարվածի վերաբերյալ: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով այն է՝ «1. Խուլիգանությունը՝ դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը հիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ մինչև մեկ ամիս ժամկետով:

4. Սույն հոդվածի երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:»

Գործով որպես մեղադրյալ ներգրավվել են ՀՀ քաղաքացիներ Ս.Պ.-ն, Ա.Ս.-ն, Տ.Ք.-ն և Ա.Ա.-ն: Նրանց նկատմամբ ներկայացվել էր միջնորդություն կալանքը որպես խափանման միջոց կիառելու մասին, որը բավարարվել էր:
Գործով ՆՍՀԿ փաստաբաններ՝
Հայկ Հայրապետյան
Արա Ղարագյոզյան

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ԿԱՍԿԱԾՅԱԼ ՏՐԱՆՍ* ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃՎԵՑ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

2017թ.-ի նոյեմբերի 2-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը գրանցեց իր հերթական հաջողությունը:
Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչի կողմից որոշում կայացվեց Պ.Ա.-ի նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճելու և նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին:
Չնայած Տուժողի կողմից տրված ցուցմունքների, այնուամենայնիվ կատարված առերեսումների ու այլ դատավարական գործողությունների արդյունքում ապացուցվեց «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության վստահորդ Պ.Ա.-ի առնչության բացակայությունը կատարված հանցագործությանը:
Վերջինիս պաշտպանությունն իրականացվում էր «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության փաստաբան Արա Ղարագյոզյանի կողմից:
Հիշեցնենք, որ Պ.Ա.-ն մեղադրվում էր ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցագործության կատարման մեջ (ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ):